

ՄԵԼԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կես տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Դատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարադաբադի գինում են ուղղակի

Тифлиса. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄԵԼԿ“

Դրանով է առանձին համարներով հատը 7 կոպէկով, բացի խմբագրատանը 5 կոպէկով խանութներում: ԴԱՏՈՒՐԵԱՆԻ և ԱՐԱՏԽԱՆԵԱՆԻ խանութներում (Շաբաթօրէի տանը), Զ. ԳՐԻԳՈՐԻԱՆՑԻ գրաւաճառանոցում (Կամուրջի մօտ) ԳՐԻԳՈՐԻԱՆՑԻ մագաղանում (Միլիոնի տանը, Երևանեան հրապարակի վրա) և ՍԱՐԱՅԵԱՆԻ ծխախոտի խանութում (Կամուրջի վրա):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հոգևորականութիւնը. — Ներքին տեսչութիւնը, Հայոց Թատրոն, Նամակ Դատարանի, Նամակ Խմբագրի: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւնը, Թիւրքիա, Աւստրո-Ունգարիա, Արտաքին լուրեր: Ստան Լուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Հանգուցեալ բարեկամի նամակներէն:

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Արդէն քանի տարի է, որ մեր հոգևորականութեան խնդիրը օրական խնդիրների շարքից չէ հեռանում:

Ամեն կողմից գրում են հոգևորականների գործունէութեան վրա, ամեն կողմից քննում են նրանց իրաւունքները, պարտաւորութիւնները:

Հատերը չեն բաւականանում նրանց տգիտութիւնը, պակասութիւնները նկարագրելով, այլ և պահանջում են, որ մեր հոգևորականները լինեն այնպէս բարձր, այնպէս բազմակողմանի զարգացած, պատրաստ իրանց բարձր և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՅՑ

Նրա քեզանից, Թանգաղին բարեկամ, Թոյլտուութիւն խնդրելով նամակները տպելու, դու պատասխանեցիր՝ իմ մասին յետոյ կարող ես տպել: Այժմ դու վերջացրել ես քո կարճ կեանքը, և ես տպում եմ նամակդ, որպէս զի հասարակութեան էլ յայտնի լինի քո կարծիքը կանանց մասին, այն էակների մասին, որոնց հետ մենք բաժանում ենք մեր կեանքի յաջող և անյաջող բօլակները...

Ահա ինչ էիր գրում դու ինձ, դեռ ես անցեալ տարի, երբ ես յայտնեցի քեզ որ սիրահարված եմ:

«Գովել ես, թէ ինչ է պատահել քեզ: Սիրահարված եմ, գրում ես ինձ, Չէի սպասում, որ դու մինչ այդ աստիճան յիմար լինես: «Սիրահարվել եմ Նատալիայի վրա, օգնիր ինձ խորհուրդ տուր...» Քաջալը դեղ գիտեանայ իր գլխին կանէ: Եղբայր, դու գիտես այն բոլոր

սուրբ կոչման համար, որոնց նրանք են իսկ Եւրոպայի լուսաւոր ազգերի հոգևորականութեան մէջ դժուարագիւտ են:

Թէ ազգային կեանքի շարժման ժամանակ հայոց եկեղեցին և նրա պաշտօնեաները մի նշանաւոր տեղ պէտք է բռնէին, այդ հասկանալի է, որովհետեւ մեր եկեղեցին ժողովրդական է և ազգութիւնը եկեղեցու հետ մօտիկ կապ ունի: Յաւալի է միայն, որ շատերը թողնելով ուրիշ աւելի կարեւոր խնդիրներ, մի անգամ ուրիշներից բռնած ճանապարհին հետեւելով, յարձակվում են հոգևորականների դէմ, գուցէ շատ անգամ իրաւացի բայց շատ անգամ և անիրաւ կերպով: Մենք չենք հերքում, որ մեր հոգևորականները կրթութեան մէջ յետ են մնացել, շատերը նրանցից բոլորովն անուս են, իրանց պարտաւորութիւնների մասին դէպի եկեղեցին, դէպի ժողովուրդը ոչինչ հասկացողութիւն չունեն: Նոյնպէս չենք ուրանում, որ ամեն մի հայի իրաւունքն է, խօսել հոգևորականների գրութեան վրա, քնննադատել նրանց գործունէութիւնը, երևան հանել նրանց թերութիւնները — ի հարկէ միշտ ընդհանուրի, եկեղեցու, ազգի օգուտը ի նկատի ունելով: Այդ տեսակ քննութիւնները, խորհրդածութիւնները շատ լաւ բաներ են, բայց երբ սկսում են հոգևոր

հանգամանքները, որոնք ինձ պատահել են, դու գիտես այն բոլոր վիշտերը, որոնց ես կրել եմ և այդ գիտեանաւոր յետոյ, դու սիրահարվում ես և այն էլ ինձ վրա, Նատալիայի վրա, որ նոյն դաստիարակութիւն է ստացել, նոյն բլթացնող հարուստների չըմանին է պատկանում, որին Աննան, այն աղջիկը որ կեանքիս մտածանքութեան պատճառը եղաւ: Ինչ է իցէ, դու ինձանից խորհուրդ ես հարցնում, զրա փոխանակ լըսիր հետեւեալը: Գիտես որ Աննա ես խօսք տուիք իմ Թիֆլիսից գնալու ժամանակ նամակներ գրել միմեանց: Ես գրում եմ առաջինը պատասխան չեմ ստանում, գրում եմ երկրորդը՝ նոյնպէս, գրում եմ երրորդը՝ կրկին չեմ ստանում պատասխան և այդպիսով շարունակ հինգ նամակ գրեցի, բոլորն էլ մնացին առանց պատասխանի... Ինչ կը նշանակի այսպիսի մի երեւոյթ: Մէկ ուրիշ համար գուցէ անբացատրելի լինի, բայց ես, որ ճանաչում եմ թէ Աննային, և թէ այն չըմանը, որի մէջ ես պտտում է, ես լաւ եմ հասկանում: Այնպիսի մի յիմար միտքի համար, որ չէ ճանաչում մեր հասարակութեան բարձր դասակարգը, այդ կարգի օրերորդների անհաստատութիւնը, դրանց չըմանի ազդեցութեան ենթարկվելը, այդպիսի մէկը գուցէ ասէր՝ «Թիթէ նա ինձ դիտմամբ չէ պատասխանում: Գուցէ նրան չեն թոյլ տալի: Միթէ նա կարող է մոռանալ իր երգումները, կարող է

րականներին պահանջներ դնել, այդ ի հարկէ մեզ զարմացնում է: Ի՞նչ ենք տուել հոգևորականներին, որ ինչ պահանջներ նրանցից: Հոգևորականները երկնքից չեն գալիս, — հրաշքների դարը անցել է, — հոգևորականներն էլ մեր միջեցն են դուրս գալիս, ժողովրդից են առաջանում: Եթէ քննութեան տակ զգենք թէ ինչ մարդիկ են հոգևորականութեան մէջ մտնում, ինչ նպատակով, ինչ ճանապարհներով, ինչ տեսակ կրթութեան, ուսումի մարդիկ են դրանք, — այն ժամանակ կը տեսնենք, որ հոգևորականների ամենամեծ մասը բոլորովն անկիրթ, անպատրաստ իր սուրբ կոչման համար, ժողովրդի խեղճ դասին պատկանելով, ընդունում է բնականապէս եկեղեցին, իր պաշտօնը ոչ թէ իբրեւ նպատակ, այլ ինչպէս միջոց իր ապրուստը հայթայթելու: Այս ամենս աչքի առաջ ունենալով, մենք չը պէտք է զարմանանք, որ հոգևորականների մէջ պատահում են անկարգութիւններ և գտնվում են այնպիսի հոգևորականներ, որոնք դատապարտվելու արժանի են, այլ պէտք է զարմանանք, որ մեր հոգևորականները ինչպէս որ կան, համեմատած ուրիշ շատ ազգերի հոգևորականների հետ, աւելի բարձր են կանգնած և հազիւ են պատահում մեր հոգևորականների մէջ

մոռանալ այն փոքրիկ սենեակը, որտեղ այդքան երջանիկ բօլակներ ենք անցկացրել, այն պայծառ լուսինը, որ մեր խօսակցութիւնների, երկար, անվերջ խօսակցութիւնների վրայ էր լինում: Մի գիշեր, ես յիշում եմ, լուսինը այն երեկոյ շատ էր պայծառ, այդ երեկոյ մենք խօսում էինք: Ի՞նչ բաների վրա, ի՞նչ իմանում, ի՞նչ է կարող մտաբերել: Խօսում էինք առանց մի բօլակ դադարելու, ժամանակը անցնում էր, իսկ մենք այդ չէինք նկատում, և ինչպէս կարող էինք նկատել, ի՞նչ էր զրա վրա մտածում... վերջապէս այնքան խօսեցինք, որ լուսինը մայր մտաւ: Այդ խոսք վրան էլ յօգնեց մեր խօսակցութիւնը լսելով, իսկ մենք զարձեւալ շարունակում էինք լսել: Իսկ մայր մտաւ, փախաւ մեզանից... Այս բոլոր կը մտաբերէր այդ միամտը և կասէր. «Նա չէ կարող ինձ մոռանալ, դա անկարելի է...»

Իսկ ես ուրիշ կերպ եմ մեկնում, ուրիշ կերպ եմ հասկանում այդ լուսինը, Գա նշանակում է, որ նա ենթարկվեց իր չըմանողների ազդեցութեանը, լսեց զանազան ազգականների և ընկերակիցների բարեկամական խորհուրդները: Նա գտաւ մէկ ուրիշ, որ աւելի հարուստ է քան թէ ես, աւելի յիմար է քան թէ ես, որովհետեւ կարող է նրան սիրել, գտաւ այդպիսի մէկին և սկսեց զրա հետ յարաբերութիւն ունենալ: Նա կարող էր բաւականանալ իմ սիրով, իմ համեստ միջոցներով, երբ ես նրա մօտ էի,

այնպիսի անհամ անցքեր, որոնց կրկնվելը ամենօրեայ պահանջ է օտար ազգի հոգևորականների մօտ: Վնասադատութեան տակ դնելով մեր հոգևորականութեան դասը, մենք իրաւունք չունենք ամեն մի առանձին երեւոյթ, ամեն մի անցք ընդհանրացնել, մէկ անհատի, ուրեմն մի հոգևորականի պակասութեան համար ամբողջ հոգևորականութիւնը պատասխանատու անել: Նայենք մեր չորս կողմը, մենք կը գտնենք աւելի խոշոր պակասութիւններ հոգևորականների մօտ աւելի լուսաւորված երկիրներում, օրինակ կաթօլիկ աշխարհում...

Թէպէտ և մենք լաւ գիտենք հոգևորականութեան աննախանձելի դրութիւնը, իրանք հոգևորականները խօստովանում են այդ, բայց բաւական է, ինչ որ մինչև այսօր գրեցին, քննեցին, բաւական է, որչափ որ յարձակվեցան հոգևորականների դէմ, որովհետեւ դրանով մենք մեր նպատակին չենք հասնելու: Պահանջելուց առաջ տանք, որ կարողանանք յետ պահանջել: Եթէ հայ ժողովուրդը սիրում է, պաշտում է իր առաքելական սուրբ եկեղեցին, կամենում է իր եկեղեցու համար արժանի հոգևորականներ և իր համար օրինակելի առաջնորդներ ունենալ, թող պատրաստ լաւ հոգևորականներ, թող ան-

կեր կարող էի ազգել նրա վրա, իսկ հիմա ուրիշ է. այդ ոչինչ հաստատուն հիմք չունեցող էակը փոխեց, այդ փափուկ մոմը ուրիշ կերպ ծալեցին: Նա ինձ մոռացաւ...

Իսկ քո խոստումները, քո երգումները, հարցրու դրանից:

— Ես երեւոյթ էի, կը պատասխանէ նա քեզ իր սովորած դերից:

— Իսկ քո աչքերը, այդ երկու այրող կրակները, այդ երկու համր վիշտերը, որ հիմա էլ կենդանի են, հիմա էլ նոյնքան փայլուն են, ինչքան սրանից մի քանի ժամանակ առաջ:

— Ի՞նչ, դա երեկոյան մի սխալ էր, կասէ նա նոյն դերից, այսպիսի խօսակցութիւնը ոչ ձեռք և ոչ ինձ համար չեն կարող ախորժելի լինել:

Ահա այսպէս կը վերջանայ խօսակցութիւնը... մինչև այժմ քեզ դու էր ասում, այժմ դու քեզ կասէ:

Այսպիսի դրութեան մէջ եմ, և դու, բարեկամ, խորհուրդ ես հարցնում: Մի կին ես սիրում, Ներքին, եթէ ազատ կը խօսեմ, Միթէ դու կարող ես աւելի սիրել, կամ աւելի սիրված լինել, քան թէ ես: Իսկ ինձ հետ, տեսնում ես, ինչպէս վարվեցին: Մի կարծիք, որ սխալվում եմ, որ յուսահատված լինելով, ոչինչ չեմ տեսնում: Ո՛չ: Պարզ բան է, որ իմ համեստ միջոցները չեն կարող բաւականացնել մէկ ժամանակակից օրիորդի, և այն էլ այդ չըմանից: Պատճառական սի-

տարբեր չը մնայ դէպի իր եկեղեցին և հաւատը թէ քահանայ և թէ ուրիշ բարձր հոգևոր պաշտօններ համար ընտրութեան ժամանակ: Իր իրաւունքները բարձր չը թողնէ և իր պարտաւորութիւնները կատարելու չը դանդաղի, պինդ և միաբան պաշտէ և պաշտպանէ Լուսաւորչի աթոռը, այն ժամանակ նա իր պարտաւորութիւնները կատարած կը լինէր, կունենար իրաւունք պահանջելու, և մենք կունենայինք եկեղեցու արժանի պաշտօնեաներ:

Ինչիւն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հայոց թատրոնը թիֆլիսում որքան եռանդով որ սկսեց, որքան համարել է եղաւ հայ հասարակութեան իր սկիզբներում, երբ թատրոնի դահլիճը լեցն էր լինում, նոյնչափ համեմատութեամբ էլ ընկաւ, վերջացրեց իր գործունէութիւնը: Քանի որ սկիզբներում հայ թատրոնը մինչև անգամ երկու որոշ, կազմակերպված, թէպէտ միեւնոյն հակառակ խմբեր ունէր, այժմ նրան երբեմն երբեմն հայ հասարակութեան յիշեցողները լինում են սիրողների ներկայացումներ: Քաւորօնի գլխաւոր գործողներից մէկը պ. Ամբրիկեան, կարծես մոռացված է հասարակութեանց, իսկ միւսները իրանց գործերով են զբաղված: Եթէ ոչնչւ համարենք Ձմեռեան և Ամբրիկեան պարոնների խմբի գործունէութիւնը, եթէ հերքենք նոցա հասարակութեանը մոռացված ծառայութիւնը, չէ կարելի արձանագէտ այն իրողութիւնը, որ գրանց հայկական թատրոնի համար մի հասարակութիւն կազմեցին որոնք թատրոնի մշական այցելողներն են: Այդ հասարակութիւնը, թէպէտ փոքրթիւն է, բայց կայ և նրա գոյութեանը մեծ նշանակութիւն պէտք է տալ: Բացի հասարակութեանց հայոց թատրոնը ունի մէկ փոքրիկ և ընտիր բէպէրատուար, թէ ինքնուրոյն գրվածներ և թէ թարգմանած պիեսների: Եթէ մի հա-

յոցը գցենք անցեալի վրա, կը տեսնենք որ վրաց թատրոնը էլ մի և նոյն ճանապարհով է անցնացել, մի և նոյն յաջողութիւնների և անյաջողութիւնների է հանդիպել և այժմ նա էլ այն դրութեան մէջն է, ինչ դրութեան մէջ է և մեր թատրոնը՝ նրա փառաւոր անցեալի յիշեցողները, ինչպէս և մերիներ, ուշ ուշ ստանաւ սիրողների ներկայացումներն են: Վրացիների թատրոնը էլ ունեցել է թէ իր խումբը և թէ իր տաղանդաւոր հեղինակներին: Մեր թատրոնական խմբից մնացել են մի քանիս, միւսները ցրվել են զանազան կողմեր, իսկ վրացիների խումբը բոլորովն անհետացել է: Չը նայելով որ մեր խմբից մի քանիս մնացել են, մենք չենք կարող գրանց վրա յոյս դնել, չենք կարող հաւատալ, որ այդ մարդիկ կարողանան շարունակել թատրոնական գործը, այսպէս որ չը մնասեն թատրոնին, չը նայելով իրանց բարի ցանկութիւններին: Մեր թատրոնը կարող են վերականգնեցնել միայն թատրոնասէրները, այսինքն այնպիսի մարդիկ, որոնք թատրոնի եկամուտից ոչնչւ ակնկալութիւն չեն ունենայ, որոնք պատրաստ կը լինեն մինչև անգամ բոլոր եկամուտը ծախսել, որպէս զի ներկայացումը չըբղ լինի, որպէս զի հասարակութիւնը բաւական մնայ, իր տված փողը զօհաբերութիւն չը համարի: Քանի որ մեր հասարակութիւնը իր համար պէտք չէ համարում թատրոնը, ուրեմն չէ ապահովացնում եկամուտը, քանի որ մեզ մօտ չէ կազմվել մի ընկերութիւն, որ մինչև անգամ իր օգուտները աչքի առնալ ունենալով, պահպանէր թատրոնի օրինաւոր գոյութիւնը, վերջապէս քանի որ գոնեա մի գումարաւոր, կրկին օգուտը աչքի առնալ ունենալով, ձեռք չէ մեկնել հայոց թատրոնին, մեր բոլոր յոյսը պէտք է լինի սիրողների վրա: Ինչ որ կարելի է անել այս հանգամանքներում թատրոնի համար, այդ կարող են միայն թատրոնասէրներն անել: Իսկ պ. Տէր Դաւթեանի և ընկ. ներկայացումների նման ներկայացումները, որոնք թատրոնի մահն են: Նոյն դրութեան մէջն է վրացիների թատրոնը: Նա էլ օգնութեան է սպասում թատրոնասէրներից մինչև որ մի որոշ վիճակի կենթարկվի: Թատրոնը, մարդկութեան առաջադիմութեան գրողներից մէկը, թատրոնը, հասակ առած մարդիկների այդ ուսումնարանը, զբաղմունքը քնքշացնող այդ հիմնարկութիւնը՝ օգնութեան է սպասում թատրոնասէրներից և միթէ այդ մարդիկ իրանց ձեռքը չեն մեկնի այնպիսի մի գործին, որից հարեւուրտ մարդիկ սովորել են թէ իրանք հայ են:

րոյ դարը անցաւ. ինչպէս կարելի է, մէկ ին սիրելի թիֆլիսից Ախալցխա: Ներկայ դարը՝ բէպէրատ է, հոգի չունենք: Միւրում ենք նրանց, որոնք մօտ են, որոնց կարող ենք գրել: Երբեք կարող ենք համբուրել: Նիւրը ունենք, բայց սէր. ոչ: Մարմին և արիւն ունենք: Այդ են պահանջում մեզանից և այդ էլ պէտք է տանք: Ի՞նչ միտք ունի պատիւը՝ այն ժամանակ, եթէ դրա վրա ուշադրութիւն չեն դարձնում: Ուրեմն սիրելի, եթէ ուզում եմ Դոն-Կիխոտ լինել, եթէ ոչ գուարձացիր, որքան ժամանակ անցկացրու և հեռացիր չուտով, քանի որ սարդի ոտանցիների մէջ չես ընկել, հակառակ դէպքում՝ ինձ նման քեզ վրա էլ, քո սուրբ զգացմունքիդ վրա էլ կը ծիծաղեն և քեզ կը դնեն, ինչպէս մի անպիտան չորի կտոր: Ներքին խնայող և արտաքին անուսինների աշխատանք երեւակայնում են դու: փոքրիկ երեխայ, համեստ, բայց իստակ հագնված, երեխայի մազերը սև, ինչպէս ծիծեռնակի փետուրները, գրանք մէջ տեղը ձգած են: Իսկ մազերի ծայրերը զուգուց. Նա մօտեցում է քեզ, թնթիւնով է անհասկանալի բաժեր, գրելու խաղացնելով, անհանգիստ աչքերով (ո՞ւմ աչքերի են նման) նայում է քեզ վրա, փափակ թափիկները գնում է ծնկների վրա: Եւ կը դիմանայ այս հրապարակին, չը զուգործում են նրա

անմեղ, մաքուր ճակատին մի համբոյր, որ քո ընտանի սիրոյ գրաւական կարող է համարվել, այնպիսի մի համբոյր, որ ամեն մէկ օտար տեսող կը նկատէ, որ դա մի սիրող հօր և սիրված ամուսնու համբոյր է: Միւրում, համեստ գրասենեակ, շարունակում են դու երեւակայել, որտեղ վառարանը արեւի գերն է խաղում: Դու նստած ես բազմաթիւ վրա, գրասեղանի վրա, տեսնում ես հաշիւներդ, կամ վերջապէս մի ուրիշ գործով ես զբաղված: Իսկ նա... նա թեք է ընկել բազմաթիւ վրա և ուշադրութեամբ նայում է քո հաշիւներիդ, կամ գործին: Դու մտածում ես, յօնքերը ցած են թողնում, մի անմխիթար միտք քեզ գրադեցնում է և այդ ժամանակ, կենսաբիւլ այդ տեսող րօպէսներէ մէկում լսում են նրա քնքշող ձայնը: Ի՞նչ ունեն, բարեկամ: Այն ինչ քան ներդաշնակութիւն կայ այդ ձայնի մէջ, ինչքան քաղցրութիւն, ինչքան բանաստեղծութիւն, որ երաժշտութիւն կարող է դրանից բարձր լինել: Կատակներ փոխվում է: Դու գրում ես, որ մի հրեշտակի շունչը փչում է ձեզանից, մի չար, սպիտակ մատների անցում են մազերիդ միջով, այդ նրա ձեռքն է: Յօնքերը ուղղվում են, երեսը պարզվում է, այլ ևս չիքո՞ւ չը կայ: Եւ ունում են այդ ձեռքը, այդ աստուածային ձեռքը՝ և երկար, երկար համբոյր մէջ մոռանում են ամեն բան: Մոռա-

Այս վերջին տարիները եղել են սիրողների ներկայացումներ, իսկ այս տարի ոչնչւ չը կայ, ոչ որ չէ խօսում, ոչ որ չէ աշխատում, որ մէկ ներկայացում լինի: Թատրոնասէրներ ասելով, մենք չենք խօսում բարձր դասի, օտարացած, հայութեանց հեռացած օրիորդների և երիտասարդների վրա: Մեր խօսքը այն օրիորդների և պարոնների վրա է, որոնցից մի քանիս առանց վարձատրութեան, միւսները համեստ վարձատրութեամբ գործում են հայոց զանազան հիմնարկութիւնների մէջ... Մեր խօսքը հայութեան համար աշխատող այդ համեստ մշակների վրա է: Ցաւալի է խոտով լանվել, որ մենք բաւականանում ենք մէկ կամ երկու ներկայացումներով, այն ժամանակներից յետոյ, երբ մի քանի տարի շարունակ մեր թատրոնը տեղադրան գոյութիւն ունէր: Ամօթ է և մեր հասարակութեան համար, որ նա չէ կարողանում պահպանել մի այդպիսի ամենակարեւոր հիմնարկութիւն, ինչպէս է աղաքին թատրոնը:

Յ. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՅ

Նոյեմբերի 30

Կաղթական հայերին՝ օգնութիւն հասցնելու համար անտարբեր չը մնաց և Շամախու միջակը: Վեհափառ Կաթողիկոսի կողմակի և տեղւոյ միջակաւոր առաջնորդ Թադէոս եպիսկոպոսի ազդեց ջարդողների չնորհիւ ստորագրութիւն բացվեց թէ տեսու թէ վիճակներում և շատ կարճ ժամանակամիջոցում ժողովեց մինչև 1500 րուբլի փող, որը և ուղարկվեցաւ Ելմիածնայ Միջոցը, որ գործ դրուի կաղթականների համար: Ստորագրութիւնը դեռ ևս չարժանավոր է և յոյս կայ, որ էլի շատով մի նշանաւոր գումար կը գոյանայ տեղիցս: Ի հարկէ այդպիսի երևոյթներ մի գեղեցիկ ապացոյց են, որ մեր ազգը չը նայելով իր մի քանի առանձնաշատութեանց, որտեղ էլ որ գտնվելիս լինէր երբեք սառն չէ իր սրբազան պարտաւորութեանց մէջ: Սակայն անկարելի է այստեղ լուծութեան թողուլ մի հարց: Ինչպէս Շամախու, նոյնպէս և Կովկասեան այլ վիճակներում հոգեւոր իշխանութեան հրամանի համեմատ ստորագրութիւն է բացված և իւրաքանչիւր մի վիճակ իր կարողութեան չափ իր օգնութիւնը չէ ղլացած այդ գեղեցիկ նպատակի համար և այդ միջոցով ժողոված գումարները ևս բոլորը ուղարկված են Ելմիածնայ, բայց թէ ինչ կերպով, ինչպէս, ինչ միջոցով են գործ գրված և գործ դնվում այդ գումարները, ցանկալի էր որ այդ մասին մեր հոգեւոր իշխանութիւնը, ինչպէս թիֆլիսի մասնաժողովը, հաշիւ ներկայացնէր ազգին:

առանձին տպագրութեամբ և կամ թէ նոյն իսկ «Արարատի» միջոցով, որով թէ բաւականին գրաւած կը լինէր ազգի համակրութիւնը, և թէ բոլորովն կը միամտացնէր ազգը, որ նրա փողերը ի դուր չեն կորչում, այլ գործ են գրվում իր կամքի և նպատակի համաձայն:

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա դեկտեմբերի 8

Տեղւոյս եղիաբարձեան օր. ուսումնարանի երրորդ դաստան աշակերտուհիք լսելով լրագրաց միջոցաւ խղճով հայ գաղթականաց տըխուր վիճակը և տեսնելով ընդհանուր շարժումը դէպի դրամական օժանդակութիւն, ինքեանք ևս ցանկացան իրանց աղքատիկ լուծան ձգել նոյն թշուառների դանձանալը: Ահա այս նպատակաւ սկսան արծարծել իրանց մէջ ստորագրութիւն բանալու միտքը, որը և շուտով յաջողեցին հաւաքել, բացի իրանց տուած նուէրներից, և մի քանի բուրլի իրանց փոքրիկ ընկերուհիներից: Նոցա հաւաքած փողը, որ ընդամենն է տասն և երեք (13) րուբլի 30 կօպ., ահա ուղարկում են ձեզ խնդրելով հասցնել նպատակին: Ցանկալի է տեսնել հրատարակված պատական «Մշակ» լրագրի միջոցաւ նուիրատուների անունները, որք են հետեւեալները: Շուշանիկ Մուրթաֆեան 2 րուբլ, Շուշանիկ Մամիկոնեան 4 ր., Շուշան Սուքիասեան 1 ր., Մարիամ Մուրթաֆեան 1 ր., 50 կ., Սանդուխտ Բագրատունեան 1 ր., Երմինէ Աղաջանեան 40 կ., Շուշան Ալեքսեան 50 կ., Կատարինէ Մուրթաֆեան 50 կ., Շուշանիկ Վարդանեան 20 կ., Թադէոս Խալախանեան 20 կ., Աննա Բայպուրտեան 20 կ., Թեկզէ Ստեփոյեան 20 կ., Նազելի Մարտիրոսեան 20 կ., Հռիփսիմէ Աղաւադեան 20 կ., Եւգենիա Աղապապեան 20 կ., Աննա Վարդապիւրեան 10 կ., Շուշան Տէր-Եղիայեան 20 կ., Նեկտարինէ Չըկարեան 40 կ., Վարդուհի Հարախեան 30 կօպէր (Փօստի ծախսի համար հանած եմ 30 կօպ.)

Եղիաբարձ Մամիկոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ գործակատարների ընկերութեան կանոնադրութիւնը հաստատվել է կառավարութեանց:

Անցեալ նոյեմբերի 22-ին նորին պայժառափայլութիւն ՓՈԽԱՐԱՑՈՒ ՕԳՆԱԿԱՆՆԸ բարեհաճեց հաստատել Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան կանոնադրութեան նախադիւր, կանոնադրութեան, համեմատ այս ընկերութիւնը նպատակ ունէ, ա) դրամական օժանդակութիւն տալ այն գործակատարների ընտանիքներին, որոնք մի որ և իցէ անապօղ յանգամանքով աղ-

րին, որոնք փնչերը բռնած չափում են քաղաքիս փողոցները և մագաղանները... Սիրելի սրանից յետոյ, եթէ շատ ցանկանում ես, սիրելի և կնոջ նման լաց եղիւր, կամ թերի ամեն բանի վրա, հարբի, մոռացիր քեզ մի որ և է կնոջ գրկի մէջ: Ահա քեզ գեղեցիկ կեանք և դրադմունք այն բոլոր յիմարութիւններից յետոյ, որ մենք սէր ենք անուանում, իսկ մեր օրիորդները «ДЮБОВ» իսկ եթէ քեզ կը պատահի մի անմեղ էակ, վարուիք ինչպէս րօպէն կը պահանջի, նոյն իսկ այդ րօպէն, եթէ ոչ այդ անմեղ հրեշտակը կը դառնայ կատու, իսկ քեզ կը շինէ մուկ. քեզ իսկոյն չի սպանի, ոչ դու պէտք է քեզ խաղացնի իր թաթերի մէջ: Խեղճ մուկ... ես չէի ուզենայ այդ տեսակ մուկ լինել, իսկ եթէ դու կամենում ես, կարող ես: Այսքանը միայն, սիրելի բարեկամ, եթէ կարողացար օգուտ քաղել իմ նամակից, շատ ուրախ կը լինեմ:

Տպելով քո նամակներից մէկը, սիրելի բարեկամ, ես ի նկատի ունէի քո ծանօթութիւնը մեր հասարակութեան հետ: Յոյս ունեմ ժամանակ առ ժամանակ միւս նամակներից էլ լոյս ընծայել:

քառ զբոլման են հասել, ք) Գործակատար-
ների երկնայնքը միջոց տալ ուսում առնել, զ)
Գործ որոնել գործակատարների համար, զ) Մի-
ջոց տալ անդամներին և նրանց ընտանիքնե-
րին պարագայունքից ազատ ժամանակը անց-
կացնել յարմար, անորոշելի և օգտակար կեր-
պով, ե) Միջոց տալ անդամներին փոխա-
տուութիւն ստանալ և խնայել, Այս նպա-
տակներին հասնելու համար ընկերութեանը
թոյլատրվում է՝ ա) կազմել, կանոնադրու-
թեամբ որոշած կանոններին համեմատ, առան-
ձին գումար, այսպէս անուանված «բարեգոր-
ծական դրամարկը» կարօտութիւն զգացող ըն-
կերութեան անդամներին օգնելու համար, բա-
րեգործական դրամարկի մասնակցողներին, գոր-
ծակատարների զատակարգելից, և նրանց ընտա-
նիքներին, բ) բաց անել ուսումնարան գործա-
կատարների երեխաների համար կառավարու-
թեան օրինաւոր թոյլտուութեամբ, զ) կազմել
իրանց անդամներին և նրանց հիւրերի համար
խնջոյքներ, դիմակահանդէսներ, պարահանդէս-
ներ, երաժշտական, գրականական երեկոյներ և
դրամատիկական ներկայացուցիչներ, զ) բերել տալ
զրբեր, պարբերական թերթեր, և նոյնպէս հրա-
պրել այնպիսի անձանց որ դատախօսութիւն
անեն օգտակար տեղեկութիւններ տարածելու
ընկերութեան անդամներին մէջ, և ե) հիմնել,
կառավարութեան թոյլտուութեամբ, փոխառու
և խնայողական ընկերութիւն:

Թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան
ընկերութեան պ. պ. անդամները հրապարակում
են. ա) վճարել անդամութեան համար որոշած
փողը եկող 1878 տարվայ համար ընկերութեան
գանձապահ Ա. Գ. Ս. Երզնէի վրէժ (փոխադարձ
կրէդիտի ընկերութեան հաշուապահին) և բ) ներ-
կայ գտնվել հերթական ընդհանուր ժողովին,
այս ղեկավարների 20-ին ընկերութեան բնակա-
րանում Չիթախովի տանը, Սերգիեվսկի փողոցի
վրա, при канцелярии коннозаводского округа.

Գեկտեմբերի 12-ին Թիֆլիսի Գումայի նիս-
տում քննվող հարցերից մէկն էր և Ուսարավայի
առաջարկութիւնը հացի մէլայանի վրա պլատ-
ֆորմ չինել, որպէս զի Վիպրերով ալիւրը ցելի
մէջ չը դնեն և չը փաշտեն նրա մի մասը, Տա-
րաբարտաբար Գումայի շնորհակցեց այդ առա-
ջարկութիւնը, ուրեմն կրկին պէտք է Վիպրերը
ցելիներում դրվեն և նրանց մի մասը անպիտան
խմոր դառնայ:

Մի և նոյն նիստում Գումայի մի մասնաժողով
ընտանք, որի նպատակը պէտք է լինի միջոց-
ներ գտնել Թիֆլիսի Սոցիալական Կոնսուլատ-
թիւնների զարգանալուն արգելել:

«Бак. Изв.» լրագրի վերջին համարում խմբ-
բարդութեանը ուղղված մի նամակ կայ, որտե-
ղից տեղեկանում ենք, որ պ. Մարգուլով յո-
գուտ գաղթական ընտանիքների տված հայ
ներկայացման եկամուտը 230 ռուբլ առել է և
գնացել Ղուբա. Պ. Գ. Մարգուլով ներկայաց-
ման կարգադրողներից մէկն էր. Ներկայացման
գիշերը նա ստանում է բոլոր փողերը և առանց
հաշիւ տալու, մինչև անգամ առանց աֆիշաների
և միւս ծախսերը վճարելու, նա գնում է Ղուբա,
Մարգուլով Ղուբայի հաշտարար դատարանի օգ-
նականի մօտ թարգմանի պաշտօն է կատարում,
լրագիրը յոյս ունի, որ պարոնին կենթարկեն
քննական դատաւարանին, ինչպէս վարվելին մի
քանի տարի առաջ այն պարոնների հետ, որոնք
Սամարցիների համար հաւաքած գումարը ծախ-
սել էին:

ԳԱՆՁԱԿԻ հոգեւոր ուսումնարանի հոգաբար-
ձուներից մէկը, պ. Լիսիկեան մեզ գրում է, որ
տեղական ուսումնարանի հոգաբարձուները, նը-
րանց թիւում և ինքը, ոչ խառնվել են տեսուչ
պ. Նախկնդոսեանի գործերում և ոչ արգելք
են եղել նրա գործունէութեան. «Մենք չենք
կամեցել հրաժարեցնել տեսչին, աւելացնում է
պ. Լիսիկեան, այլ ինքը պ. Նախկնդոսեանը,
որ անդադար արքունական պաշտօն էր կամե-
նում գտնել, հրաժարվել և պ. Բաղդասարի քար-
տուղարի պաշտօնը ընդունել»:

ՊԱՆՏԱՎԱՅԻՑ ստացանք յօգուտ գաղթած
հայ ընտանիքների համար 6 ռուբլ հետեւալ
անձներէ. Խաչատուր Տէր-Թորոսեան 3 ռ.,
Սարգիս Գալիզեան Ղազարեանց 2 ռ., Զարու-
թիւն Բաբայեանց 1 ռուբլ:

Ս. Պետերբուրգի «Северный Вестник» լրա-
գիրը ժամանակաւորապէս արգելվեցաւ կառա-
վարութեան և այժմ այդ լրագրի տեղը բաժա-
նորդներին ուղարկվում է «Бирж. Вѣдом.» լրա-
գիրը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻԱ

«Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է
Կ. Պոլսից հետեւեալ նշանաւոր կտորը որը
ցոյց է տալի որ Բ. Գուռը միտք չունի շու-
տով խաղաղութիւն կապելու իրան թշնամի-
ների հետ: «29 (17-ին) նոյեմբերի Ֆրան-
սիական դեսպանատան գործակալ Կոմս դէ-
Մուլին գնաց արտաքին գործերի մինիստր
Սերվէր-փաշայի մօտ և ներկայացրեց մինիս-
տրին այն հեռագիրը, որը ստացել էր Մահ-
մէդ-Ալի-փաշայի գլխաւոր բանակի Ֆրան-
սիական զինուորական գործակալից, որի մէջ
հաղորդում էր որ թուրքերի զօրքերը մա-
քրել են Օրիսանի: «Գուռ, Կոմս, գործի հան-
գամանքը աւելի լաւ դիտէք քան թէ մենք»
պատասխանեց այս բանի վրա Սերվէր-փաշան:

—Մեր զինուորական գործակալը հեռագրին
նայելով, շարունակեց դէ-Մուլին—ուսանեց
այժմ գնում են Սօֆիայի վրա և կը սպառու-
նան Արքիմանդիտի: —Մեզ բոլորովին այդ
բանը յայտնի չէ, արագութեամբ պատաս-
խանեց մինիստրը, և հաւատացնում եմ ձեզ
որ մեր նոր կազմակերպած զօրքը կարող կը
լինի յետ մղել թշնամուն: —Ձեռն հակառա-
կվում, որ վերջին հեռագիրներին նայելով
ձեր կառավարութիւնը պատուիրել է կող-
մակերպել բաւական մեծ զօրք, բայց մինչև
որ այս զօրքերը կարող կը լինեն պատերազմի
դաշտի վրա կանգնել թշնամեաց դէմ, ուս-
նելը այս ժամանակ համարձակ կարող են
հասնել մինչև Կ. Պոլսի: —Ոչ, երբէք, արհա-
մարհովեամբ կրկնեց Սերվէր-փաշան: —Ոչ
մի կերպով այդ բանը չի պատահի: Կ. Պոլսի
ձանապարհի վրա ուսանելը կը տեսնեն իրանց
առաջ զինուորական բոլոր մահմետական աշ-
խարհը և այն ժամանակ կը տեսնենք, ո՞վ
ուժը կը յաղթէ: —Աւելի լաւ չէր լինի եթէ
մի քանի զինուորականներ անէին որով կա-
րել է խաղաղութիւն վերահաստատել Ռու-
սաստանի հետ: —«Գումս, այն, ինչ որ դուք
ասում էք, ուրիշ շատերը ևս այդ մի և նոյն
միտքն են յայտնել: Մենք ամեն բանի վրա
առաջուց մտածել ենք, և հասել ենք այն եզ-
րակացութեան որ ներկայ ըսպէս մենք առ-
րաժամ ենք համարում» Հաղել թէ Սերվէր-
փաշան վերջացրեց իր երկար խօսակցութիւնը
մտաւ նրա մօտ թագաւորական երկրորդ քար-
տուղար Ղարա-Թէօօրը և զաւաթի ընկե-
րութեան հաւաքիրը տուեց Սերվէր-փաշա-
յին, որի մէջ քննվում էր Կոմս Գեյրբի ձառի
բովանդակութիւնը: Սերվէր-փաշան բացեց
հեռագիրը և կարդաց լսելի ձայնով: Տեսնում
էք, նկատեց դէ-Մուլին որ Անգլիան ոչինչ
չի անի մինչև անգամ այն դէպքում, եթէ
Ռուսաստանը բոլոր Հայաստանը կը նուաճէ:
«Մենք երբէք յոյս չենք դրել Անգլիայի վրա,
պատասխանեց նրան մինիստրը, ուղղել է,
շատ խօսակցութիւն կար Անգլիական կառա-
վարութեան միջամտութեան վերաբերու-
թեան վրա: Կայարարը աշխատում էր
մինչև անգամ այս բանի վերաբերութեամբ,
բայց իսկպէս միջամտութեան հարցը մինչև
անգամ Բ. Գուռը պաշտօնական կերպով չէ
քննել»:

ԱՐՏԱՔԻՆ ՈՒՆԳԱՐԻԱ

Լրագիրներում կարգում ենք, որ Պէշտի
մէջ ղեկտեմբերի 5-ին թիւրքաւէր ունգա-
րացիների միմիկը կար, որին մասնակցեցին

8000 աւելի մարդ: Ժողովի մէջ առաջինը
խօսեց Ալէքի (Ժողովի) անգամ Գեյրբի: Մենք
տեսնեցինք այն բոլոր օրերը, ասաց նա, երբ
թիւրքերը յաղթող էին հանդիսանում պա-
տերազմի դաշտում, և հիմա էլ, երբ Սերբիան
պատրաստվում է վերջին անգամ հարված
տալ Թիւրքիային, մենք չենք կարող լուռ
մնալ: Ռուսաստանի ազդեցութեան տիրապե-
տելը Թիւրքիայում մեզ համար կեանքի և
մահի խնդիր է: Մենք այդ չը պէտք է
թոյլ տանք, եթէ մինչև անգամ մեծ զոհա-
բերութիւններ անելու լինէինք, եթէ մինչև
անգամ ստիպված լինէինք զենք առնել: Մեր
կառավարութիւնը ոչինչ չէ անում: Ծնմարիտ
է կան մի քանի արգելքներ, բայց եթէ նա
չէ կարող ոչնչացնել դրանց, ուրեմն թող
հրաժարվի, կորչի, ուր որ ուղղում է: Այժ-
ման խաղաղութիւնը խաղաղութիւն չէ:
Թող առեն այստեղ գտնվող արվեստագործներ,
վաճառականներ, մշակներ՝ միթէ նրանք նա-
խապատվում են այսպիսի խաղաղութիւնը
պատերազմին: Պատերազմի և խաղաղութեան
հարցը միշտ թագաւորներն են վճռում: Մենք
էլ պէտք է մեր կառավարութեան միջնոր-
դութեամբ խնդրենք թագաւորից, որ պա-
տերազմ յայտնէ Ռուսաստանին, և դրանով
վստասկէ թէ փառք և թէ իր հպատակների
սկըր: Հարկաւոր չէ, որ մեզ հրամայեն պա-
տերազմ գնալ բաւական է, որ թոյլտու-
թիւն ստանանք: Գեյրբից յետոյ խօսում է
Էտիկը: Պոլսը: Նա սկզբից յայտնեց, որ Օսման-
փաշան մեռաւ (այդ ժամանակ բոլոր ներկայ
երկրները զլեարկները վերցնում են): Յետոյ
Էտիկը համեմատեց 1818 և 1877 թվերը:
«Երբ անգամ էլ, ասաց նա, Ռուսաստանին
օգնեց երեք մեծ պետութիւնների դաշնակա-
ցութիւնը: Անցելով և այժմեանի դանազա-
նութիւնը այն է, որ այն ժամանակվայ Ան-
գլիային Մետերնիխն էր, իսկ այժմեան Մե-
տերնիխը Անգլիայի անուն է կրում: Մենք
սրանից պէտք է պահանջենք, որ պատերազմ
յայտնէ Ռուսաստանին: Մեր կառավարու-
թեան պաշտօնական քաղաքականութիւնը
անհիմն է, վտանգաւոր է և միանգամայն
հայրենիքի դէմ է: Ռուսաստանը մեզ կըն-
ծայէ Բանիսան, բայց մենք չենք կամենում
այդ ընծանալ: Էտիկը իր խօսքերը վերջացրեց
բացականչելով «կեցցէ պատերազմը» Այդ ձա-
ռախօսութիւններից յետոյ ամբողջ գնաց
դէպի մինիստր-նախագահ Տիսայի տունը,
բայց այս վերջինը հրաժարվեց ընդունել
պատգամաւորներին: Այն ժամանակ այդ բո-
լոր ամբողջ սկսեց անկարգութիւններ անել
լապտերների սիւները հանեցին, պօլցիա-
կաններին և ժանդարմներին ծեծեցին, մինչև
որ կանոնաւոր զօրք եկաւ և ցրվեց ժողո-
վուրդը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հաղորդում են որ քրիստոնեա-
ններից նահանգապետներ նշանակվել են փա-
շայութեան աստիճանով՝ Ղարա-Թէօօրը և
Օրեանը:

—Աթէնք 2-ին (14-ին) ղեկտեմբերի, ուրախ
երեկոյեան: Ապալօքոնում, Կրիտա կղզիի վրա
անկախութիւն է հրատարակված:

—«Իտալիայում» լրագիրը պատմում է նշանաւոր
բաներ պապի և նրա մտերմների ֆանատիկո-
սութեան մասին: Պապը այժմ գտնվում է բո-
լորովին անչարժ գրութեան մէջ, այսպէս որ իւ-
րաքանչիւր առաւօտ բարձրացնելով առանձնով
հանգստացնում են նրան մաքուր անկողինի վրա:
Երբ որ այս գործը վերջացնում են, մտնում է
քահանայն նրա ննջարանը և պատարագ է մա-
տուցանում: Պապը ինքն իրան ձեռքով վերց-
նում է սրբութիւնը և բերանն է դնում իւրա-
քանչիւր օր Մէկարելի և Անտօնուչի բժիկները
կապում են նրա ձախ ոտը: Այս ոտի վրա եղած
վերքը յուսահատութեան մէջն է ձգում բժիկ-
ներին, այդ վերքը ծածկել անհասկին են հա-
մարում, բայց այդ վերքից գնացող արիւնը շատ
թուլացնում է ս. Կորը: Պապի առաջին սենե-

կապեա պ. Զանգօլինի, որին օրէնքով պատ-
կանում են բոլոր հին առարկաները, սպիտա-
կեղէնները, փաթեթները, հողաթափները և
այլն, որոնցից սենեկապետը յոյս ունէ որ կա-
րող է մեծ օգուտ քաղել և այս պատճառով մեծ
եռանդով հաւաքում է փաթեթները, որոնք ա-
րիւնի և վերքից ծորած նիւթով են չաղախ-
ված: Նա արդէն այդ բոլոր չորի կտորները հա-
ւաքել է մէկ մեծ պարկի մէջ որի ամեն մի
կտորին ջերմեւոր կաթօլիկները մեծ զին են
տալի: Իւրաքանչիւր օր Զանգօլինի ստանում
է Զրանսիայից և Անգլիայից անթիւ նամակներ
որոնց մէջ պահանջում են ուղարկել որքան կա-
րելի է շուտով այն չորի կամ սպիտակեղէնի
կտորը որ դիպել է ս. Կոր մասին: Մէկ անձն
առաջարկում էր մեծ գումար այն արիւնոտ հո-
ղաթափի համար, որը ս. հայրը հազած ունէր
կարկաստօնի ուխտագնացներին ընդունելու ժա-
մանակ, բայց Զանգօլինին չը տուեց հաշիւով
որ աւելի թանկ կը ծախէ: Վերջին օրերում
պապի վերքը ծածկվել է, որի համար ամբողջ
վատիկանում շատ վրդոված են:

—Իտալիայում, Մանֆրէդօնի կողքին, Գար-
գանօ լեռան ստորոտում գտնվեցաւ ստորերկ-
րեայ քաղաք: Սա հին Սիպոնտում է, որ երկ-
րաշարժից կործանվեցաւ և որի մասին խօսում
են Ստրաբօնը և Տիտոս-Լիվիոս: Այս քաղաքը
գտնվում է 20 մետր խորութիւն ունեցող, մշակ-
ված դաշտերի տակ: Ամենից առաջ գտան Գիա-
նայի տաճարը, յետոյ հոյակապ սիւների շարքերն
վերջապէս գերեզմանատներ 15 հազար մետր
տարածութեամբ և բազմաթիւ ուղեգնաց և ար-
ծաթեայ առարկաներ և դրամներ: Արձանների
վրա եղած գրութիւնները գեղեցիկ կերպով պահ-
պանվել են, նրանցից մի քանիսը ուղարկեցին
Նեապօլի թանգարանը: Վերջին գիւտն է գե-
ղեցիկ պահպանված արձան ի պատիւ Պօմ-
պեոսի:

—Բէլգրադ. ղեկտեմբերի 15-ին, Սերբիայի
կառավարութիւնը հրամայեց իր զօրքերին սահ-
մանները անցնել: Խրիստօյը դուրս եկաւ Կ.
Պոլսից, Պատերազմի վերաբերութեամբ հրա-
տարակված հրովարտակը լիւնցնում է սերբիա-
կան ազգասէներին 1839 թիւ յուլիսի 20-ին Կօ-
սովի դաշտի վրա եղած պատերազմը (այս պա-
տերազմի մէջ սպանվեցան սուլթան Մուրադ Ի-ը
և սերբիացուց թագաւոր Լազարը, և ահա այս
պատերազմը սերբիացուց թագաւորութեան կոր-
ծանման պատճառ դառաւ), որի պատճառով
պարտաւոր են թիւրքերից վրէժ առնել: Այժմ
երբ սլավոնների պաշտպանը մերկացրել է
սուրը, այս դէպքում Սերբիան անգործ չը
պէտք է մնայ, այլ պէտք է սրբազան պատե-
րազմին մասնակցէ:

—Գեկտեմբերի 1-ից հաւաքած տեղեկութիւն-
ներից երևում է, որ ուսաց բոլոր կորուստը
պատերազմի սկզբից, պատերազմական երկու
բեմերի վրա է 77,658 մարդ:

—Աթէնք, 13 (25) ղեկտեմբերի: Այստեղ բո-
լոր ժողովուրդը պահանջում է, որ կառավարու-
թիւնը շուտով պատերազմ յայտնէ տաճիկնե-
րին:

—Ալեքսանդրիա, 12 (24) ղեկտեմբերի: Եգիպ-
տական զօրքը 3000 զինուորներին նստեցրին
նաւերի վրա և ուղարկեցին Ֆուլքիա:

—Կ. Պոլսի 12 (24) ղեկտեմբերի: Սուլէյման
փաշան իր գլխաւոր բանակը դրեց Թաթար-
Բազարլիկում: Ժողովուրդի անբաւականութիւնը
մեծանում է կառավարութեան դէմ: Կառավա-
րութիւնը խիստ միջոցներ է գործ դնում,
շատ ուշիններ արտօրկեցան:

—Կեօնի լրագրին գրում են ղեկտեմբերի
5-ին Կ. Պոլսից, որ այնտեղի ազգաբնակչութեան
մեծ մասը խառնական դրութեան մէջն է
գտնվում: Թուրքերը շատ երկնջաւ են դարձել:
Քրիստոնեաները ազատութեան և անկախու-
թեան մասին են երազում, յոյները— Բիւզան-
դիայի կայսրութեան մասին, հայերը— Կիլիկիայի
թագաւորութեան մասին: Թղթակիցը նոյնպէս
հաղորդում է որ ոչինչ դրական բան չէ կարելի
ստել խառն միլիցիայի կազմակերպութեան
հարցի վերաբերութեամբ, մի քանիսները ա-
նում են որ սա տեղական միլիցիան է, միւսները
ասում են որ այդ զօրքը կարելի է գործածել
պատերազմի համար ուրիշ զօրքերի հետ միա-
մէջ: Գրաւորների վրա գրված են մասնաւորական
ասացուածներ: Միլիցիա պէտք է մտնեն և քրիս-
տոնեաները: Յունաց պատրիարքը և բողոքներ
էկզարկը պահանջում են որ միլիցիան մնայ
իրան տեղը, հայոց պատրիարքը պիտ. ևս չէ
յայտնել իր կարծիքը: Նորբերում հայոց լրա-
գիրները լուր տարածեցին որ իբր թէ Ներսէս
պատրիարքը հրաժարական տուեց:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ